

ՅԻՇԵՆՔ ԲՐՆԱԴԱՏՈՒԱԾՆԵՐԻՆ

Posted on April 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Յովհաննէս Սարկաւազ Գումրուեան, 15 Մարտ 2023

Ադրինէ Թորոսեանը հետաքննող լրագրող է, հեռուստաբեմադրիչ, բեմագիր, հետազօտող-փորձագէտ, մանկավարժ: Աշխատել է հայաստանեան առաջատար լրատուամիջոցներում, միջազգային տարբեր ծրագրերում: 15 տարուց աւելի հասարակական գործունեութիւն է ծաւալում իրաւական, կրթական, ընկերամշակութային եւ բնապահպանական ոլորտներում: Հայաստանեան եւ միջազգային մի շարք մրցոյթների յաղթող է: Օրերս «Յունիսի 14» ամենամեայ մրցոյթում նոյնպէս արժանացել է առաջին մրցանակին:

- Յարգելի՛ Ադրինէ Թորոսեան, լրատուական ծառայութեան անունից ողջունում եմ Ձեզ եւ շնորհակալութիւն յայտնում հարցազրոյցի մեր առաջարկն ընդունելու համար:

«Եւրասիա» համագործակցութեան հիմնադրամը Գրողի համաշխարհային օրուայ առթիւ գրական-մշակութային միջոցառում էր կազմակերպել, որի ընթացքում տեղի ունեցաւ «Յունիսի 14» մրցոյթի մրցանակների յանձնման արարողութիւնը: Ի՞նչ է խորհրդանշում անուանումը եւ ո՞րն է մրցոյթի նպատակը:

Յունիսի 14-ը խորհրդային ժամանակների բռնադատուածների յիշատակի օրն է: Այդ առիթով «Եւրասիա» համագործակցութեան հիմնադրամը (ԵՀՀ) յայտարարել էր ստեղծագործական մրցոյթ: «Յունիսի 14» աւանդական մրցոյթի առանցքում մարդն է, խորհրդային ժամանակներում հալածանքի, քսորի ու բռնաճնշումների երեւոյթներն ու պատմութիւնը, անարդար իշխանութեան եւ բռնութեան ծիրի մէջ դրանք դիտարկելը, մեկնաբանելն ու վերլուծելը: Նպատակն է վերականգնել եւ հանրայնացնել Հայաստանի պատմութեան այդ շրջանը, յիշեցնել մարդկանց այդ մասին, գրոյցներ ծաւալել մեր ոչ վաղ անցեալի պատմութեան շուրջ եւ դասեր քաղել: Խորհրդային տարիներին բռնաճնշումների ենթարկուածների, քսորեալների կամ քսորի ականատեսների անձնական պատմութիւնները, նրանց ժառանգների յուշերը հաւաքագրելը հնարաւորութիւն է տալիս ծանօթանալու մեր պատմութեանը այլ կողմից՝ իրողութիւնները տեսնելով հենց վերապրածի աչքերով:

Նիւթերը գնահատել է անկախ յանձնաժողովը: Այս տարի ԵՀՀ-ն յանձնեց չորս մրցանակ, դրամական պարգէներ եւ հաւաստագրեր:



Աջէն 2-րդը Ադրիսէ Թորոսեան՝ իր գործակիցներով

– Ի՞նչ սիւթ էք ներկայացրել եւ ի՞նչ զգացողութիւններ էք ունեցել ստեղծագործական գործընթացում:

Հաւաքուած պատմութիւնները ներկայացնելու համար այս մրցոյթում ժանրային լայն հնարաւորութիւն էր տրուած՝ գեղարուեստական գրութիւն (պատմուածք, չափածոյ), հրապարակախօսական յօդուած, հրապարակագրութիւն (որեւէ գրական սեռի, ներառեալ՝ գրախօսութիւն, վերլուծութիւն եւ այլն), վաւերագրական պատմութիւն, գիտական յօդուած, գրաֆիկ սովել, գրքից հատուած, տեսանիւթ, վաւերագրական ֆիլմ, գեղարուեստական ֆիլմ, պատկերապատում, լուսանկարներ՝ բացատրական բնագրով, նաեւ երգ, երաժշտական ստեղծագործութիւն, գեղանկար, քանդակ, ճարտարապետական նախագիծ եւ այլն:

Ես գրուցակցիս հետ խօսակցութիւնը տեսածայնագրում էի իմ տեսախցիկով: Բաւականին երկար գրուցեցիք: Նա պատմում էր ամուր ծայնով, բայց յաճախ էր ընդհատում պատմութիւնը, յիշողութիւններն էր ժողովում, զգացմունքներն էր վերապրում... Ես ամբողջ ընթացքում մեղքի ու զղջման մարդկային իմ բաժինն էի ապրում ու մաշկիցս ներս թափանցող սարսուռ զգում...

Երբ վերադառնալով՝ նստեցի աշխատելու ու փորձում էի հասկանալ՝ ինչ տեսք է ստանալու ստեղծագործութիւնս, տեսագրութիւնիցս մի հատուած նայելով՝ հասկացայ, որ այդ ամէնն այնքան է ներանձնական, որ երեւի թէ իրաւունք չունեմ տեսապատկերով

հրապարակելու 73-ամեայ մարդու՝ արքայազնից այդպէս էլ ամբողջ կեանքում թաց մնացած մանկութեան աչքերը... Եւ շատ արժեքաւոր այս գրոյցն ամբողջական պահպանելու ու պատմութեանը փոխանցելու համար որոշեցի դարձնել այն յուշապատում՝ վերնագրի համար ընտրելով, իմ կարծիքով, արքայի ամբողջ ողբերգութիւնը խտացնող հետեւեալ պատկերը՝ «Ես այդ մի կտոր չոր հացը ոչ թէ ուտում էի, այլ փոքր կտորներով ծծում, որ երկար վայելեմ համը...»:

Ես վաւերագրել եմ դրամատուրգ, արձակագիր, երգիծաբան Սամուէլ Խալաթեանի մանկութեան պատմութիւնն արքայազնից՝ ամենաանկեղծ, բայց ցաւոտ յիշողութիւններով:

- Ձեզ շնորհուեց առաջին մրցանակը: Ինչո՞վ էր առանձնայատուկ Ձեր աշխատանքը:

Ամենակարեւոր գնահատականը յանձնաժողովի անդամի այն դիտարկումն էր, որ թէեւ վաւերագրութեան հիմքում փաստագրութիւնն է, եւ այդտեղ յստակ է փաստերի տարանջատումը, բայց իմ ներկայացրած նիւթում փաստն ու յոյզը միաձուլուած են եւ՝ շատ նրբօրէն: Սա արդէն գեղարուեստական վաւերագրութիւն է: Վաւերագրուած փաստերով ամբողջական գեղարուեստական պատկերներ են ի յայտ եկել:

Յանձնաժողովի անդամը նիւթից մեջբերեց նաեւ իր վրայ տպաւորութիւն թողած այն հատուածը, որ արքայազնը հաւաքուած հայերը, վախեցած, որ լսող կը լինի, հայկական երգերը խմբով երգում էին մտքում՝ իրար հետ սկսելով, իրար հետ աւարտելով...

«Մի հետաքրքիր երեւոյթ կար: Նախ, որպէս կանոն, եթէ հայերը ինչ-որ խնդիր էին ունենում, մեր տանն էին հաւաքուած, սեղան էին գցում, ինքնաթոր օղի (սամոգոն) էին բերում, տատիս պատրաստած գարեջուրը դնում սեղանին: Հայրս ասում էր. «Դէ՛, տղէ՛ք, սկսե՛նք երգել»: Տիրում էր մի խոր լռութիւն, բոլորը մտքում էին երգում... Ես երգի բառերը գիտէի, Անդրանիկին նուիրուած երգերն էին: Երգում էին, բայց վախեցած, որ լսող կը լինի, մատնող կը լինի... Ինձ մինչեւ հիմա զարմացնում է, թէ ինչպէ՞ս էին բոլորը լուռ, իրար նայելով, իրար հետ սկսում, իրար հետ աւարտում այդ երգերը...»:

- Երկար տարիներ լրագրողական, հանրային գործունեութիւն էք ծաւալել: Ո՞րն է լրագրողի առաքելութիւնը:

Լրագրողի առաքելութիւնը ես ընդհանրապէս դիտարկում եմ երկրային իմ առաքելութեան ու կոչման մէջ. արդարութեան, ճշմարտութեան, հաւասարութեան հաստատումն ու երջանիկ հասարակութեան ստեղծումը:

- Իմ մեծ հայրը նոյնպէս ստալինեան բռնաճնշումների է ենթարկուել՝ անարդար պատիժը կրելով Ալթայի երկրամասում: Բոլոր բռնադատուածների ժառանգների անունից շնորհակալութիւն եմ յայտնում Ձեզ, բոլոր մասնակիցներին ու կազմակերպիչներին՝ բռնադատուածների յիշատակի օրը վառ պահելու համար:

Վերջում ի՞նչ կը մտադէք մեր ընթերցողներին:

Վերջերս բոլոր մտքերս երջանկութեան մասին են: Միտքս ամփոփեմ Ջոն Լենոնի յայտնի պատմութեամբ. փոքրուց մայրը նրան սովորեցրել էր, որ կեանքում ամենակարեւորը երջանիկ լինելն է: «Ո՞րն է կեանքի իմաստը» դպրոցական շարադրութիւնն էլ նա ուղղակի գրել էր՝ լինել երջանիկ: Ուսուցչի դիտողութեանը, թէ նա չի հասկացել յանձնարարութիւնը, Լենոնը պատասխանել էր, որ այդ նա՛ չի հասկացել կեանքը:

Մտադում եմ բոլորիս՝ սովորենք լիարժէք իրացնել երջանիկ լինելուն՝ մեզ ի վերուստ տրուած մեր բնական իրաւունքը:

- Շնորհակալութի՛ւն: Յուսանք Ձեր գրութիւնը շուտով հասանելի կը լինի նաեւ մեր ընթերցողներին:

There are no comments yet.